

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ
Լրացուցիչ կրթական ծառայության պայմանագիր

2016թ. Բ. Երևան

Շնչահանուր դրույթներ

Լրացուցիչ կրթական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքում են ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կրթահամալիր) Հիմնական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) ... դասարանի սովորողը (այսուհետ՝ Օրինական ներկայացուցիչ) և Դպրոցի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար) Շամիրամ Պողոսյանը Սովորողին լրացուցիչ կրթական ծառայություն մատուցելու մասին: Պայմանագիրը նախատեսված է Հանրակրթության մասին ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), Կրթահամալիրի զարգացման ծրագրով, կանոնադրությամբ:

Պայմանագրի առարկան

Պայմանագրի առարկան սովորողի նախասիրությունները և հետքրքրությունները բավարարելու նպատակով Ծառայության իրականացումն է: Ծառայության բովանդակությունն է (այսուհետ՝ Բովանդակություն):

Երկարացված օրվա (14:00- 17:00) ծրագրի կազմակերպում որպես հանրակրթության լրացում, երկուանգամյա սնունդ, ուսումնական նախագծեր, լրացուցիչ կրթության ծրագրերի կազմակերպում:

Կողմերի պարտականությունները և իրավունքները

Սովորողը պարտավոր է.

- մասնակցել Բովանդակությամբ որոշված բոլոր պարպմունքներին և չուշանալ դրանցից.
- պարապմունքի ժամանակը այլ նպատակով չօգտագործել.
- անկանխատեսելի բացակայելու կամ ուշանալու դեպքում տեղեկացնել դասավանդողին:

Սովորողն իրավունք ունի.

- մասնակցելու Բովանդակությունը կազմելուն.
- Բովանդակությունում փոփոխություն առաջարկելու:

Օրինական ներկայացուցիչը պարտավոր է.

ապահովել Սովորողի մասնակցությունը պարապմունքներին

- Սովորողին ապահովել անհրաժեշտ գործիքներով, պիտույքներով, գրականությամբ, հագուստով
- ժամանակին կատարել պայմանագրով որոշված վճարումները:

Օրինական ներկայացուցիչը իրավունք ունի.

- մասնակցելու Բովանդակությունը կազմելուն
- Բովանդակությունում փոփոխություն առաջարկելու
- ժամանակից շուտ լուծելու պայմանագիրը՝ նշելով պատճառները:

Դասավանդողը (մարզիչը) պարտավոր է.

- չուշանալ պարապմունքներից
- պարապմունքի ժամանակը այլ նպատակով չօգտագործել
- կատարել սովորողի հաշվառում

- ապահովել Բովանդակության իրականացումը
- Օրինական ներկայացուցչին և Ղեկավարին պարբերաբար տեղեկացնել սովորողի գործունեության մասին

Պայմանագրի գինը

1. Ստացած Ծառայության համար Օրինական ներկայացուցիչը պարտավորվում է Կրթահամալիրի հաշվարկային հաշվին տարեկան փոխանցել 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, վճարումները սահմանված կարգով անել փոխանցումով՝ կիսամյակային՝ մինչև սեպտեմբերի 5-ը և մինչև փետրվարի 5-ը, կամ ամսական՝ վճարելով 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ. ամսական վճարման դեպքում վճարումը կատարել մինչև տրված ամսվա 5-ը՝ այն հաշվով, որ առաջին հինգ ամիսների համար վճարումը կատարված լինի մինչև դեկտեմբերի 20-ը, իսկ երկրորդ հինգ ամիսների համար՝ մինչև մայիսի 20-ը:
2. Ոչ լրիվ ուսումնական տարվա դեպքում ստացած կրթական ծառայությունների վճարը հաշվարկվում է ամիսը 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրի լուծման հիմքերը

Պայմանագիրը լուծվում կամ գործողությունը դադարում է սահմանված կարգով.

- 1) Օրինական ներկայացուցչի և Սովորողի նախաձեռնությամբ, երբ դժգոհ են մատուցված Ծառայությունից:
- 2) Ղեկավարի նախաձեռնությամբ՝ երբ Օրինական ներկայացուցիչը կամ սովորողը չի կատարում պայմանագրով որոշված պարտականությունները:
- 3) այլ դեպքերում:

Որևէ հիմքով պայմանագիրը լուծարելու դեպքում արդեն մուծված գումարը չի վերադարձվում:
 Պայմանագիրը գործում է մինչև 2017թ. հունիսի 20 :

Կողմերի ստորագրությունները

Սովորողի օրինական ներկայացուցիչ՝
 Դպրոցի ղեկավար

Շամիրամ Պողոսյան

Բանկային հաշվի համարը՝ Հայէկոնոմբանկ
 Մետաքս մասնաճյուղ հ/հ 163218137665